«ԿՈՄԻՏԱՍԻ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԿԹԻ ՊՈԱԿ

KOMITAS MUSEUM-INSTITUTE
NON-COMMERCIAL STATE
ORGANIZATION
KMI NCSO

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

«Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի 2025 թ. հունիսի 28-ի նիստի

ք. Երևան

հունիսի 28, 2025թ.
Նախագահությամբ՝ Լ. Սահակյանի
Քարտուղարությամբ՝ Մ. Վարդանյանի

Համաձայն N66/25 հրամանով հաստատված գիտական խորհրդի կազմի՝ նախատեսված 15 անդամներից նիստին ներկա էին 13-ը.

1.	Լուսինե Սահակյան
2.	Նարինե Սահակյան
3.	Արա Խզմալյան
4.	Գուրգեն Գասպարյան
5.	Աննա Ասատրյան
6.	Ծովինար Մովսիսյան
7.	Արամ Սաթյան
8.	Դավիթ Ղազարյան
9.	Տիգրան Մանսուրյան
10.	Աննա Արևշատյան
11.	Լիլիթ Երնջակյան
12.	Անուշ Արզումանյան
13.	Մարիամ Վարդանյան

Նիստի օրակարգը՝

1. Կոմիտաս միջազգային գիտաժողով-փառատոնի ծրագրի քննարկում /զեկուցող Լ. Սահակյան/:
2. ԿԹԻ կարճաժամկետ գիտակրթական ծրագրերի քննարկում /զեկուցող՝ Լ. Սահակյան/:
3. ԿԹԻ երկարաժամկետ գիտակրթական ծրագրերի քննարկում /զեկուցող՝ Լ. Սահակյան/:

Մինչ օրակարգի հարցերի քննարկմանն անցնելը, ԿԹԻ տնօրեն Լուսինե Սահակյանը հանդես եկավ ողջույնի խոսքով, ապա ներկայացրեց թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի

նոր՝ փոփոխված կազմը: Գիտ.խորհրդի կազմում այսուհետ լինելու է ֆոնդապահը, ով բացակայել է այդ կազմից: Պետք է լինի գիտական քարտուղարը, որի կոնկրետ գործառույթները, այլևս, հստակեցված են: Գիտական խորհրդի կազմում պետք է լինեն այն մարդիկ, ովքեր արձանագրությունների, կարծիքների և հանդիպումների արդյունքում պիտի նպաստեն և՛ գիտական բաժնի, և՛ թանգարանի աշխատանքին: Գիտական խորհրդի սույն կազմը հաստատված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից:
Լ. Սահակյանը հորդորեց գիտական խորհրդի կազմին լինել ավելի խիստ և աչալուրջ՝ թանգարանի կողմից առաջադրվող նոր թեմաների ուղղվածության և մոտեցումների հետ կապված, հիմք ընդունելով այն իրողությունը, որ հետագա ուսումնասիրությունների առանցքը պետք է լինի Կոմիտասը: Թանգարան-ինստիտուտի գիտական կազմն այլևս առաջնորդվելու է ԿԹԻ-ի կանոնադրությամբ, որն այս հաստատության հիմնադիր փաստաթուղթն է:

Օրակարգում ընդգրկված առաջին հարցի շրջանակում Լ. Սահակյանը ներկայացրեց առաջիկայում սպասվելիք **Կոմիտաս միջազգային գիտաժողով-փառատոնի ծրագիրը**:
Գիտաժողով-փառատոնն այս անգամ տեղի է ունենալու Երևանում, ինչը պայմանավորված է Կոմիտաս Վարդապետի մահվան 90 ամյա տարելիցով: Բացումը տեղի կունենա 2025թ. սեպտեմբերի 26-ին, Կոմիտասի անվան քառյակի կատարմամբ. Կոմիտասի հուշարձանի մոտ ծաղիկներ դնելուց հետո համերգային բացմամբ կազդարարվի Կոմիտաս գիտաժողով-փառատոնի բացումը: Նախատեսվում է երեք համերգ, որոնցից երկուսի համերգային կատարումն ապահովելու են արտերկրից հրավիրյալ հայ երաժիշտները:
Կոմիտաս գիտաժողով-փառատոնը եզրափակելու ենք հոկտեմբերի 7-8-ին նախատեսվելիք գիտաժողովներով, որոնք տեղի կունենան ԿԹԻ-ի դահլիճում: Տնօրենը նշեց, որ ԿԹԻ գիտակրթական բաժնի երիտասարդ հետազոտողները ևս մասնակիցն են լինելու Կոմիտասի գիտաժողով-փառատոնին: Մասնակիցների ցանկում են նաև Արվեստի Ինստիտուտի և Երևանի պետական կոնսերվատորիայի գիտական կազմը: Լ. Սահակյանը նշեց նաև, որ գիտաժողովին մասնակցության հայտ են ուղարկել նաև առաջատար գիտնականներ Ամերիկայից, Ռուսաստանից, Ուկրաինայից և Լիբանանից:

Նիստի մասնակիցների կողմից առաջարկվեց.
Ա. Ասատրյանի կողմից առաջարկվեց Արվեստի ինստիտուտի հետ համատեղ իրականացնել 2025թ.-ին նախատեսվելիք Կոմիտաս միջազգային գիտաժողովը: Առաջարկվեց գիտաժողովի բացումն ամսի 7-ին անել Արվեստի ինստիտուտի դահլիճում, իսկ փակումը՝ Կոմիտասի թանգարան-ինստիտուտում՝ ամսի 8-ին: Ի պատասխան Ա. Ասատրյանի ներկայացրած առաջարկի տնօրեն Լ. Սահակյանը հայտնեց առաջարկ, ըստ որի Կոմիտասի թանգարան-ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողները առաջին անգամ կարող են ելույթ ունենալ Արվեստի ինստիտուտի դահլիճում, իսկ անվանի երաժշտագետները՝ Կոմիտասի թանգարան-ինստիտուտում:
Գիտական խորհրդի անդամ Լ. Երնջակյանի կողմից Կոմիտաս միջազգային գիտաժողովի մասնակիցներին առաջարկվեց թեմաների ընտրության հարցում առավել ընդլայնել դրանց դիտարկման ասպեկտները և նեղ մասնագիտական թեմաների փոխարեն ընտրեն այնպիսիները, որոնք կհետաքրքրեն նաև եվրոպացի երաժշտագետներին:
Ի պատասխան Գ. Գասպարյանի այն հարցին, թե արդյոք Կոմիտաս միջազգային գիտաժողովը թեմատիկ առումով ընդհանուր երաժշտագիտական է, թե պայման է դրված, որ թեմաները

պետք է այս կամ այն չափով առնչվեն Կոմիտասի կյանքին և ստեղծագործական գործունեությանը, տնօրեն Լ. Սահակյանը պատասխանեց, որ գիտաժողովի խորագիրն է «Կոմիտասը և կոմպոզիտորական արվեստը», ինչը հնարավորություն է տալիս ընդգրկել նաև ընդհանուր երաժշտագիտությանը հարող թեմաներ:

ՈՐՈՇՈՒՄ

<u>Գիտական խորհրդի կազմը միաձայն որոշեց հավանություն տալ օրակարգի առաջին կետով առաջադրված Կոմիտաս միջազգային գիտաժողով-փառատոնի սպասվելիք ծրագրին:</u>

Օրակարգում ընդգրկված երկրորդ հարցին ընդառաջ Լ. Սահակյանն անդրադարձավ ԿԹԻ-ի սպասվելիք կարճաժամկետ ծրագրերին:
ԿԹԻ տնօրեն Լ. Սահակյանը ներկայացրեց այն մասին, որ սեղմ ժամանակահատվածում համագործակցության համաձայնագիր է կնքվել Կոմիտասի թանգարան-ինստիտուտի և «Կողբ» հիմնադրամի միջև, որը հնարավորություն կտա հրատարակելու Կոմիտասի դաշնամուրային երկերը և Ռոբերտ Աթայանի ընտանեկան արխիվի նամակները, որոնք դեռևս հրապարակված չեն:
Կարճաժամկետ ծրագրերի ցանկում է Վիլ Ժուիֆի նամականին, որոնք երկար ժամանակ եղել են ԿԹԻ ֆոնդում, սակայն դեռևս չեն հրապարակվել: Այս նամակները թարգմանվել են ֆրանսերենից հայերեն, և այժմ մշակվում են գիտակրթական բաժնի աշխատակիցների կողմից: Նախատեսվում է ժամանակավոր ցուցադրությամբ ներկայացնել այս նամակները, ապա՝ հրապարակել:
Տնօրեն Լ. Սահակյանը նշեց, որ ԿԹԻ-ը կապ է հաստատել Լուիս Ֆով-Հովհաննիսյանի որդու հետ, որպեսզի ստանանք հեղինակային իրավունքի թույլտվությունը՝ հայերեն թարգմանելու և հրապարակելու Կոմիտասի հոգեվերլուծության մասին աշխատությունը: Աշխատանքները դեռ ընթացքի մեջ են:
ԿԹԻ-ը նախատեսում է հրապարակել նաև Կոմիտասի Urtext-ով Երվանդ Երկանյանի աշխատասիրությամբ առաջին հատորը:

Նիստի մասնակիցների կողմից առաջարկվեց.
Ա. Խզմալյանը առաջարկեց Կոմիտասի հոգեվերլուծության մասին աշխատանքներում ընդգրկել նաև հոգեկան առողջության փորձագետի՝ բժշկական տերմինների ճշգրիտ թարգմանության նպատակով: Ա. Խզմալյանի կարծիքը հավանություն ստացավ գիտական խորհրդի մյուս մասնագետների կողմից:

ՈՐՈՇՈՒՄ

<u>Գիտական խորհրդի կազմը միաձայն հավանություն տվեց ԿԹԻ-ի նախատեսվելիք կարճաժամկետ ծրագրերին:</u>

Օրակարգում ընդգրկված երրորդ հարցին ընդառաջ Լ. Սահակյանն անդրադարձավ ԿԹԻ-ի նախատեսվելիք երկարաժամկետ գիտակրթական ծրագրերին:

Երկարաժամկետ ծրագրերի շրջանակներում տնօրեն Լ. Սահակյանը կարևորեց Կոմիտասի մասին երկլեզու մենագրություն ստեղծելու և հրապարակելու անհրաժեշտությունը:
Լ. Սահակյանը նշեց, որ երկարաժամկետ ծրագրերի մեջ կարևորում է նաև Կոմիտասագիտական ամբողջ գրականության թվայնացման ծրագիրը:
Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի հետ համագործակցությամբ նախատեսվում է համատեղ աշխատանք «Ավետարան»-ի և «Շարակնոց»-ի վրա:
Հայաստանի հանրային ռադիոյում Ռ. Աթայանի արխիվի ուսումնասիրությունը, որն իրենից ենթադրում է նրա հաղորդումների ձայնագրությունների ուսումնասիրությունը: Դրանք նախատեսվում է սղագրել և ապա՝ ուսումնասիրել:

Նիստի մասնակիցների կողմից առաջարկվեց.
Ա. Խզմալյանը, շարունակելով Լ. Երնջակյանի այն առաջարկը, որն էր անդրադարձը այնպիսի թեմաների, որոնք հետաքրքիր կլինեն նաև միջազգային երաժշտագիտությանը, հարցադրումով դիմեց ԿԹԻ տնօրեն Լ. Սահակյանին, իմանալու Կոմիտասի՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկվածությունը, և թե ինչպիսի՞ մշակված ռազմավարությամբ է առաջնորդվելու թանգարանը: Լ. Սահակյանը պատասխանեց, որ հայտնի միջազգային երաժշտագիտական ամսագրերը բավականին բարդ են իրենց չափորոշիչներով, սակայն թանգարանը հետամուտ է լինելու իր երկարաժամկետ ծրագրերում իրականացնել նաև այդ:
Գ. Գասպարյանի կողմից առաջարկվեց ԿԹԻ-ի երկարաժամկետ ծրագրերի ցանկում ընդգրկել նաև Կոմիտասի գիտական կենսագրության թեման, ինչը մինչև հիմա իրականացված չէ: Գ. Գասպարյանը առաջարկեց, հիմնվել Խ. Սամվելյանի կազմած տարեգրության վրա, և օգտվել վերջինիս նշած արխիվային աղբյուրներից և Կոմիտասյան նամականիից:
Գ. Գասպարյանը առաջարկեց նաև, որ ԿԹԻ-ի աշխատակիցների կողմից մամուլի ուսումնասիրության գործում ընդգրկել նաև Արմինե Գրիգորյանի երկու աշխատությունների ուսումնասիրությունը:
Գ. Գասպարյանի կողմից առաջարկվեց, որ Կոմիտասի մասին հուշերի հավաքագրման հիմքով ստեղծվեն Կոմիտասի մասին հուշագրական հատորներ:

ՈՐՈՇՈՒՄ

<u>Գիտական խորհրդի կազմը միաձայն հավանություն տվեց ԿԹԻ-ի առաջադրած երկարաժամկետ ծրագրերին:</u>

ԿԹԻ գիտական խորհրդի՝

Նախագահ՝ _____ Լ. Սահակյան

Քարտուղար՝ _____ Մ. Վարդանյան